# ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**1.** Քաղաքում ստեղծված հասարակական խորհուրդների հետ շարունակել սերտ համագործակցությունը, իրականացնել հանրային լսումներ՝ քաղաքի առջև ծառացած հիմնախնդիրների վերհանման և դրանց լուծման ուղիների մշակման նպատակով:

**2.** Շարունակել քաղաքի փողոցների և մայթերի ասֆալտապատման, բարեկարգման աշխատանքները:

**3.** Քաղաքի բոլոր թաղամասերը և բազմաբնակարան շենքերի բակերն ապահովել գիշերային լուսավորությամբ:

**4.** Շարունակել վերանորոգման կարիք ունեցող բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքները:

**5.** Շարունակել քաղաքի տարբեր թաղամասերում խաղահրապարակների կառուցումը:

**6.** Ավարտին հասցնել մարզադպրոցի բակում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքները:

**7.** Մարզադպրոցում ստեղծել նոր մարզաձևերի խմբակներ:

**8.** Վերակառուցել թիվ 1 հիմնական դպրոցի լողավազանը:

**9.** Ուշադրության կենտրոնում պահել բազմազավակ, զոհված ազատամարտիկների, անապահով ընտանիքների, միայնակ թոշակառուների, հայրենական և արցախյան պատերազմների վետերանների հիմնախնդիրները:

**10.** Շարունակել համագործակցությունը բժշկական կենտրոնների հետ, քաղաքացիներին աջակցել բժշկական օգնություն ստանալու հարցում:

**11.** Նոր աշխատատեղերի ստեղծումը համարել առաջնային խնդիր:

**12.** Քաղաքում տեղադրել նոր աղբամաններ՝ աղբից պլաստիկան տարանջատելու նպատակով, շուրջ 30%-ով կենցաղային աղբի ծավալը փոքրացնելու համար:

**13.** Շարունակել սերտ համագործակցությունը քույր քաղաքների հետ, փորձի փոխանակման նպատակով կազմակերպել փոխայցելություններ ուսուցիչների, բժիշկների և այլ մասնագետների համար:

**14.** Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ շարունակել սերտ համագործակցությունը և իրականացնել համայնքային զարգացման ծրագրեր:

**15.** Իրականացնել մշակութային օջախների հիմնանորոգման աշխատանքներ:

**16.** Կազմակերպել օղակաձև երթևեկություն Սահմանադրության հրապարակում և Մետաղագործներ - Վասիլյան փողոցների խաչմերուկում: